ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Արհովշին» ՍՊԸ-ի միջև 25.09.2021թվականին կնքված N A-33SH «ՀՀ Շիրակի մարզի Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցում» աշխատանքների կատարման պայմանագիրը լուծելու մասին

ք. Երևան «17» 07, **2025թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Արհովշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Միքայել Գրիգորյանի,** ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին Կողմեր, հիմք ընդունելով Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի **2025 թվականի մայիսի 29-ի թիվ ՓՎ/67-2025** արձանագրային որոշումը, ինչպես նաև՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ առկա են պայմանագրի էական խախտումներ, կողմերի միջև **2025 թվականի մայիսի 2-ին** կնքված համաձայնությունը, **կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.**

1. Լուծել Կողմերի միջև 25.09.2021թ. կնքված «**ՀՀ Շիրակի մարզի Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցում» աշխատանքների կատարման թիվ A-33SH** ծածկագրով պայմանագիրը:

2. Կողմերը հաստատում են, որ Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում տրամադրված կանխավճարի մնացորդը՝ 175,108,587 ՀՀ դրամի չափով, Կապալառուի կողմից ենթակա է վերադարձման սույն համաձայնագիրը կնքելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ կանխավճարի չմարված մասով Պատվիրատուն պահանջ կներկայացնի բանկային երաշխիքից գանձելու համար:

3. Կողմերը հաստատում են, որ սույն համաձայնագիրը կնքելու պահի դրությամբ Կապալառուի կողմից կատարված բոլոր աշխատանքների դիմաց Պատվիրատուի կողմից կատարվել է ամբողջական վճարում, և առկա չեն կատարված աշխատանքի դիմաց չվճարված գումարներ:

4. Կողմերը հաստատում են, որ սույն համաձայնագիրը կնքելու պահի դրությամբ առկա են թերի և/կամ անորակ կատարված աշխատանքներ՝ 25,252,128 ՀՀ դրամ գումարի չափով, և սույն գումարը Կապալառուի կողմից ենթակա է վճարման սույն համաձայնագիրը կնքելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ Կապալառուն տալիս է իր համաձայնությունը՝ կատարման երաշխիքից 25,252,128 ՀՀ դրամ գումարը գանձելու համար:

5. Սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված կանխավճարի մնացորդը և 4-րդ կետում նշված գումարը որևէ կերպ վերադարձվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն պարտավորվում է Կապալառուի կողմից որպես Պայմանագրի կատարման ապահովում ներկայացված Կատարման բանկային երաշխիքը վերադարձնել Կապալառուին:

6. Պայմանագրի 55.1 կետով նախատեսված պահված գումարի կեսը կվճարվի Կապալառուին «ՀՀ Շիրակի մարզի Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցում» աշխատանքների ձեռքբերման նոր մրցութային ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքում ավարտական ակտը տրամադրելու դեպքում, իսկ մյուս կեսը թերությունների վերացման ժամանակահատվածի՝ ավարտական ակտի տրամադրումից հետո 1 տարվա ավարտից հետո, երբ Ծրագրի ղեկավարը

հաստատում է, որ Կապալառուին ծանուցված բոլոր թերությունները շտկվել են նախքան այս ժամանակաշրջանի ավարտը:

7. Կապալառուն պարտավորվում է սույն Համաձայնագիրը կնքելու օրվանից սկսած մինչև 120 օր ժամկետով իր հաշվին իրականացնել շինհրապարակի պահպանությունը, այդ թվում՝ հոգալ պահակային ծառայության, կոմունալ և այլ անհրաժեշտ ծախսերը:

8. Սույն Համաձայնագրի կնքման օրվա դրությամբ Կապալառուի կողմից շինարարական աշխատանքների կատարման համար ձեռք բերված և չօգտագործված նյութերը համարվում են վերջինիս սեփականությունը: Դրանց համար Պատվիրատուն վճարումներ չի կատարում:

9. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

10. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, Սայաթ-Նովա համայնք, Մասիս-Ռանչպար խճ.3
ՀՎՀՀ 00846441	ՀՎՀՀ՝00110978
Հ/Հ 1510032335590100	Հ/Հ՝ 1150007143333380
Բանկ «Արարատբանկ» ԲԲԸ	Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Ս. ԲԱՂԻՆՅԱՆ	Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ. Տ. (ստորագրություն)	Կ. Տ. (ստորագրություն)